

16429


361
5-72

16429

ԵԶՄԻԱԾԻՆ Ի ՀՕՐԵ

ԵՒ

ԼՈՅՍ ՓԱՌԱՑ ԸՆԴ ՆՄԱ



ՏԵՐ, ԿԵՑՈՒ ԴՈՒ ԶՆԱՅՆ

361
5-72

Բնակու 1922

2010

ՕԳՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՎԱՀԱՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ

361

33886-Ա.Բ.

5-72



ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

Դուն նըստեր ես նամբաներուն անկիւնը,
Մազերդ իվար իշեր կախուեր է ձիւնը,
Մարմնյա վրայ կը փռանան մուր խցեր,
Ու աշուքներդ արիւնի լին են դարձեր:

Ո՞ր չար պարիկը հիւսեց թել բաղդիտ...
Ո՞վ տեսնելով քեզ տապալած ու վրսիտ՝
Պիսի յիշէ որ դուն երբեմ հզօր
Աղջիկն էիր սէգ աշքերով լուսաւոր:

Հիմա նստեր ես, ցաւազին ուրուական,
Աւերմերուն պատկերին մէջ տիրական.
Կը խածկրատէ վերենդ հովը սառաւու.
Արիւն կ'իյնայ խեղն ծիծերէդ կաս-կապուտ:

Հերի՛ք, հերի՛ք... վեր առ գուշոդ ու մի՛ լար,
Ցաւը սուրը է; ցաւը՝ մեծ ու փրկարար.
Ոչինչ կայ վեհ ժան խաչին տակ զոհն արի,
Գիշերին մէջ կը հիւսուի այզը բարի:

Պիտի կանգնիս նամբաներուն բերանը,
Պիտի ժանդես թընուրեան սեւ խորանը.
Ուտի՛ ելիր, ցաւըդ երկունք են կրկայ.
Ո՞վ մայր; աշխարհ մը ծոցիդ մէջ կը խլըրտայ:


2002

ԱՐԴԱԿ ԶՈՊԱՆԵԱՆ



Պուրբ, Մէս. 1922

17271-58



Տ. Տ. ԳԵՂՐԳ. Ե. ՎԵՀԱՓԱՄ ԵՒ ՄՐԲԱՋՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ



Տ. ՏԻՐԱՅՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ Հայոց Ամերիկայի

ԴԻՒԱՆ ԿԵԴՐ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻ

ԳԵՐ ՏԻՐԱՅՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ Նախագահ

Ատենադպիր Ատենապետ

Պ. ԱՐՄԵՆ ՎԱՀԵ Պ. Կ. ՅԱ. ՓԱ.ՓԱ.ԶԵԱՆ

Գանձային Մասնախումբ

ՇԱՀԵ ՎԱՐԴ. ԳԱՍՊԱՐԵԱՆ

Պ. ՏԵՐ ՊԵՏՐՈՍԵԱՆ

Տ.Բ. Ն. Տ. Ս. ԹԱՇՃԵԱՆ

ՏԻԿ. Ա. ՇՈՒՇԱՆ

Տ.Բ. Յ. ԾՈՎԼԻԿԵԱՆ

ԳԱՆՁԱՊԱՀ

THE NATIONAL SHAWMUT BANK OF BOSTON



17271-58

ԿՈՆԴԱԿ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Գեղարք նԱմսՅ ՅԻՍՈՒՄԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ
ԿԱՄՈՔՆ ԱՍՏՈՒԹՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՒՂԵԿՈՍ Ա-
ՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ՆԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱ-
ԽԱՄԵՆԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱԹԱՔԵԼԱՄԱՆ ՄԱՅՐ ԵԿԵ-
ՂԵՑԻՈՅ ՄՐՅԱՅ ԿԱԹՈՂԵԿԻ ԷՋՄԻԱՅՆԻ Պատուական եւ սիրեց-
եալ որդոց Մերոց, որ կայք եւ բնակեալքդ էք արտաքոյ սահ-
մանացն Հայաստանի, ի Կ. Պօլիս, ի Բուլգարիա, ի Բուլմանիա,
յԱւստրիա, յԻտալիա, ի Ֆրանսա, ի Բելգիա, ի Գերմանիա,
ի Հոլանդիա, ի Հելուետիա, յԱնդիլիա, յԵգիպտոս, յԱմերիկա,
ի Պարսս, ի Հնդիկս, ի Զաւա եւ յայլ կղզիս հեռաւորս, Զեղ ամե-
նեցունցդ հարազատ որդոց Մօրս լուսոյ Ս. էջմիածնի, ողջոյն
եւ օրհնութիւն ի վշտալի Աթոռակալէս Ս. Զօրն Մերոյ Գրիգորի
Առաքելապատիւ եւ Բազմերախտ Հայրապետի Հայաստան աշ-
խարհիս :

Ծնորհ ընդ Զեղ, խաղաղութիւն եւ ողորմութիւն Ամենա-
սուբր Երրորդութեան Զօրն Ամենակալի, Որդոյն Միածնի եւ Ս.
Հոգոյն ճշմարտի իջցէ, հանդիցէ եւ բազմասցի ի Զեղ, եւս եւ
զօրութիւն աղօթից եւ մաղթանաց եւ հովանին Սրբագործ Աջոյ
պատուական Առն Աստուծոյ եւ Լուսատուին Հոգոց մերոց Սրբոյ
Լուսաւորչին եւ ամենայն նահատակաց Հայաստան աշխարհիս
ընդ Զեղ եւ ի վերայ Զեր եղիցի այժմ եւ առ յապայն : Ամէն :

Սիրեցեալ զաւակունք իմ հարազատք :

Մինչդեռ յուսով ապագայ բարօրութեան ազգիս խոնարհե-
ցայ ընդ լծով Հայրապետական պաշտամանս . վիճակելոյն ինձ
ըստ անհասանելի տնօրէնութեան վերնախնամ Տեսչութեան կա-
մօք եւ ընտրութեամբ սիրեցելոցդ, արտայայտելոց ընդ ձեռն
պատգամաւորաց գումարելոց աստ ի Մայր Աթոռս յամին 1911:
եւ մեծաւ հաւատով եւ սիրով ձեռն արկի ի կատարումն մեծի
պաշտամանս . ջան ի գործ եղեալ զկարգաւորմանէ ազգային ե-
կեղեցական գործոց, զյառաջդիմութենէ եւ զբարեկարգութենէ

աղջային-եկեղեցական ուսումնարանաց մերոց, զհետ լինելով
նոյնպէս վերականգնան դարաւոր բռնարարեալ իրաւանց աղջի
մերոյ եւ Հայրենեաց, ընդ ձեռն ներկայացուցչաց իմոց ի դը-
րունս Եւրոպական Պետութեանց. ահա եկին հասին ի վերայ մեր
անընդհատ ամք պատերազմի, նեղութեան, հալածանաց, չարչա-
րանաց, աւարագրութեան եւ տառապանաց թէ յարեւելս, թէ
յարեւմուտս, թէ ի հիւսիս եւ թէ ի հարաւ. ամք ութեքին անընդ-
հատք յորս խոնարհ արար զմեղ Աստուած եւ ամք յորս տեսաք
զչարչարանս :

Ամայացաւ Մեծն Հայաստան ի բնիկ բնակչաց ի սիրեցեալ
զաւակացն մերոց: Մնացորդք կենդանին նահատակացն հասին յա-
նապատս Արարիոյ եւ ճողովրեալքն ի սառնամանիսն Սիրերիոյ:
Դատարկեցան քաղաքք ծաղկեալք. աւերեցան չէն աւանք եւ բա-
րելից զիւղօրայք. լոեցին ձայնք երգոց Աստուածազաշտութեանց
եւ աղօթից եկեղեցեաց սրբոց եւ տաճարաց. հիմն ի վեր տապա-
լեցան կոթողք հրաշտկերտք առաքինի եւ Հայրենասէր նախնեաց
մերոց զվանօրէիցն ասեմ եւ զմենաստանաց, որ արդիս ամայիք
եւ անապատացեալք ողբան-ընդ վաղեմի փառան անցեալս, ապա-
էնք թունոց եւ ապաստանք զարանաց հանդիսացեալք:

Եւ զի է ինձ այսքանեաց աղէտից ի զիր արկանել. ինձ մոր-
մոքել եւ զԶեզ յարտօնոր եւ ի հառաչանս ածել. քանդի ձայն հա-
ռաչանաց, հեծութեան սրտից, ողբոյն աղազակի հնչեաց ընդ ո-
լորտս աշխարհի եւ սակայն քրիստոնեայ եւ մարդասէր Պետու-
թիւնք կացին մնացին լուռ եւ անտարեր հանդէպ այսքանից սոս-
կալի գաղանութեանց: Եւ ես վշտալիս Հայեցեալ ընդ անցեալ
զանցեալսն, ողբամ ի վերայ աւերակացն Հայաստանի իրրեւ ե-
րեմիասն ի վերայ աւերակացն Երուսալէմի. «Զիարդ զատաւ
նստաւ մենացեալ երկիրն բազմամարդ եւ եղեւ իրրեւ կին մի այ-
րի լցեալ տրտմութեամբ ի մէջ այլակրօնից»:

Ողբամ ընդ կորուստ պատուական զաւակացն իմոց, սրա-
խողիսող եղելոց: Ողբամ ընդ կորուստ ալեզարդ ծերոց թաթաւե-
լոց ալեօքն ի ձապաղիս արքանց: Ողբամ ընդ կորուստ կուսանաց
նազելեաց եւ հարսանց նորահասից. յորոց բազումք լաւ համա-
րեցին զպատուաւոր մահ քան ընդ անարդ տառապալից կեանս,
անձնասպան լինելով ընդ հուր եւ ընդ ջուր: Ողբամ ընդ ձաղիկ
կեանս մատաղերամ մանկանցն որք իրրեւ զշուշանս

ներկեցան արեամբ իւրեանց ի ձեռաց բարբարոսաց ընդ մէջս կո-
տորելով, ի ծայրս նիզակաց բարձրացուցանելով եւ զքարամբք
հարկանելով: Ընկալցի Տէր զպատարազս այսոքիկս զպարզեւ-
եալսն ի Հայաստան աշխարհէ եւ յիշատակ նոցա օրհնութեամբ
եղիցի:

Ոչ սակաւ աղէտից եւ սոսկմանց եւ թշուառութեանց ականա-
տեսք եղաք Մեք ցաւօք եւ հեծութեամբ սրտի, ի ներքին թշնա-
մութեանց եւ յեղայրասպան պատերազմաց. որք մի միայն կո-
րըստարերք վասն Հայրենեաց եղեն եւ առիթ ոչնչացման եւ
թշուառութեան մնացորդաց հայ ժողովրդեան: Յորդորեմք զջեզ
զամենեսեանսդ ի սէր ազգի եւ Հայրենեաց սթափիլ եւ ի բաց վա-
նել յետ այսու զէթ զկիրս եւ զպայքարս կուսակցականս, զհետ
եւ եթ լինելով միայն եւ միայն վերաշինութեան աւերեալ Հայ-
րենեաց եւ վերածնութեան անբաղդ մնացորդացն մերոց միարան
ողլով եւ համերաշխութեամբ. քանդի «Զուգութիւնէ մայր բար-
եաց, անզուգութիւն ծնող չարեաց»:

Սիրելիք իմ, որք ընկալան զմահ, գտին զհանդիսան յաւիտե-
նից եւ ընկալան զպսակս իւրեանց. իսկ այսօր կան մնան աստէն
մնացորդք նահատակ ժողովրդեան մերոյ, որք տառապին տա-
կաւին ոչ ի սրոյ, այլ ի սովու, ոչ ի հրոյ, այլ ի ցրտոյ, ոչ յա-
սողչ վիճակի այլ ի հիւանդ: Ժողովուրդ Հայոց, առ Զեզ
դիմէ վշտալի սրտիւ Հայրապեան Հայոց, որք հեռի կայք
ի Հայաստան աշխարհէ, լուարուք, լուարուք ինձ, տարա-
բազզ զաւակունք մեր որք ի Հայաստան քաղցեալք են. մերկ են հիւանդ են, փութացարուք յօդնութիւն տա-
ռապեալ Հարց, եղբարց եւ քերց Զերոց, Փութացարուք
օգնել եւ փրկել զմնացորդս, եւ եթէ զայսոսիք եւս կորու-
սանիցիմք, զի եւս պիտոյ են մեզ այնուհետեւ հայրենիք առանց
բնակչաց: Բազում նուազս եւ ի բազում իրս օժանդակ եւ բարե-
բար հանդիսացեալ կայք կարեաց Հայրենեաց Մերոց, օգնեցէք
եւ յայս նուազ:

Ուր ուրեք եւ տարածեսցի Կոնդակս Հայրապետական, ուր
եւ հնչեսցի բարբառս վշտալի Հայրապետիս, շարժեսցին ձեռք
ողորմածացն իւրաքանչիւրն ըստ ցանկութեան օգնեսցէ իւրով-
սանն որ յինքն կրէ զսիրտ եւ զհողի Հայրենասիրական եւ ազգա-
սիրական, յոյսն մեզ եւ ակնկալութիւն ապագայի կան մնան այ-

սոքիկ բեկորք ազգի եւ հազարաւոր որբունք Մեր, պարտիք մեր
են օդնել, փրկել եւ պահել զսոսա:

Ես լիայոյ եմ եւ հաւատք իմ մեծ է առ Աստուած եւ առ Քեզ
հայ հարազատ եւ ազգասէր ժողովուրդ, զի որպէս յառաջին
նուագն յամի 1914 Կոնդակաւ Մերով եւ մեր խոկ հովանաւորու-
թեամբ լիառատ օժանդակութեամբ եւ մեծաւ վստահութեամբ
օդնեցեր բազմահազար փախստականաց, հալածելոց եւ հրեան-
դոց մերոց որոց խնամակալք եւ բաժանարք հանդիսացան ընդ
ամենայն քաղաքս Կովկասու «Եղբայրական Օգնութիւն» ան-
ուանեալ հաստատութիւնք, կազմեալք եւ հաստատեալք ի մէնջ
եւ յայս նուագ եւս սիրով եւ համոզմամբ կատարեսցես զեղեալն
յինչն զպարտիս ի վերայ Քո:

Եւ Մեք աղօթս առնեմք, զի Աստուածն Գրիգորի, Ներսեսի
եւ Սահակայ բաւ համարեսցէ զտառապանս Մեր եւ այց արասցէ
աւերեալ աշխարհին մերոյ, որպէս երբեմն առ գերեալն իսրա-
յէլ, դարձուցանելով զամենեսեանսդ ի ծոց Մայր երկրի մերոյ՝
աճել, բազմանալ եւ տիրել հայրենի ժառանգութեանց Զերոց:

Ողջ լերուք, օրհնեալք եւ զօրացեալք ի խնամս եւ ի պահպա-
նութիւն Տեառն Ամենակալի: Ամէն:

(Ի վերայ իսկականին կայ ստորագրեալ)
Վ. ՇՏԱԼԻ ԳՀՈՐԴ Ե.
ԿԱՐՈՂԻԿՈՍ ԱՄ. ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս օրինութեան յամի շնոր-
հաց Փրկչին 1921 յ31 ամսեանն Հոկտեմբերի
եւ ըստ Տոմարիս ՌՅՀԱ.

Ի Հայրապետութեան մերում Ժ. ամի յԱ-
րաբատեան Մայր Արոն Ս. էջմիածնի ի Վա-
ղարշապատ. Թ. 417

ՃՈՂՈՎՈՒՐԴ ՀԱՅՈՑ

Զեր առաջ կը դրուի Հայոց Ընդհանրական Հայրապետի սրբ-
բատառ կոնդակն իւր ամբողջութեամբ, ուր ծերունազարդ Ս.
Հայրապետը իւր հոգու ու սրտի ամբողջ դառնութեամբ ողբա-
լով Հայ աշխարհի ու Հայ ժողովուրդի աւերն ու յուսահատ վի-
նակը, Քե'զ է դիմում, ժողովուրդ Հայոց, իբր իւր հարազատ
զաւակի, իւր վերջին ապաւենի, որպէսզի Քո լուման, նոյն իսկ
վերջինը, բերես եւ ամոքես այն լայն ու ընդարձակ չափերի հա-
սած քշուառութիւնը, որ տիրում է Հայոց աշխարհի մէջ:

Երկար նկարագրի կարիք չենք տեսնիր այն ահոելի դրու-
թեան, որի մէջ դառնութեան բաժակը քամած Քո իսկ հարազատ
եղբայրակիցները, Քո արեան մերձաւորները իրենց կեանքի վեր-
ջին շունչը կը փշեն:

Եւ մինչ այդ վերջին շունչն իսպան սպառուի Քո օգնութեան
ձեռքը պիտի հասնէ, ո՛չ միայն քշուառութիւնն ամոքելու, քաղ-
ցը յագեցնելու, մերկութիւնը ծածկելու, հիւանդութիւնը բու-
ժելու, — այլ դորանից աւելի մեծ զրծի հասնելու — Հայութիւ-
նը եւ Հայ ցեղը իսպառ բնաջնջուելու վստանգը ընդ միշտ վանե-
լու:

Իմ ժողովուրդ, մեր առաջ ծառացած է ամենազօրեղ քշնա-
մին, որ Հայը երբ եւ իցէ տեսել է. Ճեր ամենքի առաջ ահոելի
բերանը բացած կանգնած է Հայութեան գերեզմանը:

Մեր առաջ կանգնած է մի զարիկուելի երկենորանքի խնդիր. «Հայու լինել, չլինելու խնդիր»:

Զեմ գիտեր Հայ մը այս ընդարձակ, ազատ մեծ աշխարհի
մէջ, որի սրտի ու մտքի մէջ այդ վտանգի ահազանգը հնչելէ եսք,
ձեռքը զրպանը չտանէ եւ իւր վերջին սենքը չդնէ Հայութեան
զոյութեան պահպանութեան մեծ ու սրբազն սեղանի վերայ,
որպէսզի հայ անունը իսպառ զնջուելուց փրկէ:

Այս մեծ հաւատով է, որ կը դիմէ Քեզ, իմ պատուական ժո-
ղովուրդ, Քո առաջնորդը եւ կը յորդորէ զէք օր մը քաղցած
մնալ եւ այդ օրուան ծախքը յատկացնել ցեղիդ փրկութեան զոր-
ծին:

Եքէ կ'ուզես ցեղդ ապրէ, եքէ կ'ուզես որ Հայութիւնը գո-
յութիւն ունենայ, եքէ կ'ուզես, որ պատութեան դատաստանի
առաջ մաքուր նակատով կանգնած ըլլալ, — ապա իրայ առաջ

տուր լումադ Հայութեան տառապանքը ջնջելու եւ Հայութեան
յարութիւնը ապահովելու համար :

Տուր, ուղարկէ եւ ստիպէ, որ ամէն ո՛ք իւր լուման ուղարկէ
եւ տայ «Հայաստանի Սովետոց Օգնութեան Ամերիկահայ Կենտր.
Յանձնախումբին», որ Վեհ. Հայրապետի հովանառութիւնն կը
վայելէ եւ որ Քո լայն հաւատքի ու վստահութեան արժանի է:

Տիրոջ օրինութեամբ եւ Հայրական ողջոյններով

ՏԻՐԱՅԻ ԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ Հայոց Ամերիկայի

1922

Յունուար 21|22

Ս. Ծննդեան Տօնի Օրը
ի Բոստոն.

Անդամք Հայաստանի Սովետոց Օգնութեան
Ամերիկահայ Կեդր. Յանձնախումբի

Տ. ՇԱՀԵ ՎՐԴ. ԳԱՍՊԱՐԵՍՆ
ՊԱ.Տ. Յ. ՏԵՓՈՅԵԱՆ
ՊԱ.Տ. Ս. ԵԱԳՈԽՊԵԱՆ
ՏԻԿ. ԱՐԵԱԼՈՅՄ ՇՈՒՇԱՆ
ՏՕՐԹ. ՅՈՎՀ. ՇՈՎՀԻԿԵԱՆ
ՏՕՐԹ. Ն. Տ. ԹԱՇՃԵԱՆ
Պ. Տ. Ա. ՏԵԲԻՃԵԱՆ
Պ. Ա. Պ. ՄԵԼԵԱՆ
Պ. Ա. ԲԱԿԻՑԻԿԵԱՆ
Պ. Պ. ՏԵԲՐՈՒՇԵԱՆ
Պ. Կ. Յ. ՓԱՓԱԶԵԱՆ
Պ. ԱՐՄԵՆ ՎԱՀԵ

Կ Ո Չ ԱՄԵՐԻԿԱՆ ԳԱՂԱՌԻՆ

Հայրենակիցներ!

Սովահար եւ ցաւատանչ Հայաստան ճգնաժամային վայր-
կեաններ կ'ապրի: Անոր աղաղակները ամէն օր կը հասնին աշ-
խարհի ամէն կողմ գանուած հայութեան:

Օգնութեան այդ սրտաճմլիկ կոչը կուգայ նաեւ մեզի՝ այս
հեռաւոր ափերուն վրայ ապրող հայութիներուս:

Ինչպէս միւս գաղութեարը նոյնպէս եւ մենք չենք կրնար ան-
տարբեր մնալ այս ողբերգական կացութեան հանդէպ:

Պարտականութեան գիտակցութեանէն մզուած՝ ամերիկահա-
յութեան վեց գլխաւոր կազմակերպութիւնները քով քովի եկան
եւ կազմեցին «Հայաստանի Սովետոց Օգնութեան Ամերիկահայ
Կեդրոնական Յանձնախումբ»ը, որպէսզի կարելի ըլլայ հաւա-
քական ջանքով մը օգնութեան ձեռք կարկառել մեր տառապող
արենակիցներուն:

Այս համազգային սլարտականութիւնը գերազանցօրէն հրա-
մայական կը դառնայ այս պահուն՝ քանի որ Հայաստանի հողին
կառչող հայութեան Փիղիքական գոյութեան պահպանումովը
միայն կրնայ երաշխաւորուիլ մեր ապագայ բոլոր յոյսերուն ի-
րականացումը:

Երբ յիշենք թէ Հայաստանի մեր քոյրերը եւ եղբայրները՝
հակառակ սովոր, մերկութեան, անօթութեան, հիւանդութիւննե-
րու եւ ամէն տեսակ տառապանքի՝ հաւատարիմ մնացին ցեղին
սրբազն իտէալին, մենք, ամերիկահայերս, բախտաւոր համա-
րելու ենք ինքինքնիս որ այս առիթով՝ գէթ չափով մը՝ անոնց
անպատճելի թշուառութիւնը մեղմելու միիթարութիւնը կ'ունե-
նանք:

Վստահ ենք թէ Արարատի ստորոտէն հասնող ահաւոր աղա-
ղակը ամէն հայու սրտին կը խօսի կենդանի բարբառով մը եւ պի-
տի մղէ զայն զոհողութիւններու ամենէն նուիրականին:

Ամերիկահայութիւնը կարեւոր գերեր կատարեց մօտիկ անց-
եակն մէջ, նուիրելով իր նիւթական ու բարոյական ուժերը մեր
մարտիկներուն, տարագիրներուն, որբերուն, կարօտեալներուն
եւ կամաւորներուն:

Այսօր՝ երբ Հայաստանի հողին վրայ մեր քոյլերն ու եղ-
րայրնեցը կը տուայտին անողոք սովին ճիրաններուն մէջ, ամե-
րիկահայութեան վրայ կը ծանրանայ անյետաձգելի նոր դոհո-
դութիւններ :

Անտարբեր մնալ, նոյնիսկ ներկայ տնտեսական աննպաստ
պայմաններուն տակ, պիտի նշանակէր ուրանալ անցեալի բոլոր
ճիրերը, բոլոր դոհութիւնները :

Ոչ, ամերիկահայը, ինչպէս ամբողջ հայ ազգը, իր դոհարե-
րութեանց տարեգրութիւններուն մէջ այդ տեսակ մեղապարտ
անտարբերութիւն մը պիտի չարձանագրէ. երբե՞ք :

Այս անխախտ հաւատքով՝ «Հայաստանի Սովելոց Օգնու-
թեան Ամերիկահայ Կեդրոնական Յանձնախումբ»ը, կոչ կ'ընէ
բոլոր հայ կազմակերպութիւններուն: Որբախնամներուն,
Կրթասիրացներուն, Կարմիր Խաչին, Քարեգործականին, Հայե-
նակցական Միութիւններուն, Քաղաքական Կուսակցութիւննե-
րուն եւ ամէն հայու անխափիր, բերելու իրենց միահամուռ եւ բո-
լորանուէր ջանքերը՝ այս հանդահակութիւնը կատարեալ եւ փա-
ռաւոր յաջողութիւն մը ընելու համար:

Յեզին ձայնն է որ կը հնչէ դարերու մէջն. հայրենակից-
ներ, կատարե՞նք մեր այսօրուան պարտականութիւնը:

ՀՅՅԱՍՏԱՆԻ ՍՈՎԵԼՈՅ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԱՄԵՐԻԿԱՀԱՅՑՅՅ
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԿՈՒՄԲ

ՏԻՐԱՅՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ (Նախագահ)
Առաջնորդ քեմին Ամերիկայի

Հ. Յ. Դաշնակցութեան կողմէ
ՏԲ. Ն. Տ. Ս. ԹԱՇՃԵԱՆ
Ս. ԲԱԿԻՏԻԿԵԱՆ

Հայ Առաքել Եկեղեցիին կողմէ
ՇԱՀԷ ՎԱՐԴ. ԳԱՍՊԱՐԵԱՆ
Ս. Պ. ՍԵԼԵԱՆ

Հայկ. Բարեգ. Ընդհանուր
Միութեան կողմէ
Կ. Յ. Ֆ. ՓԱՇՃԵԱՆ
Պ. ՏԵՐ ՊԵՏՐՈՍԵԱՆ

Ռամկալար-Ազատական
Կուսակցութեան կողմէ
ՏԲ. Յ. ԾՈՎԻԿԵԱՆ
Տ. Ա. ՏԻԹԻՃԵԱՆ

Հայ Աւետ. Եկեղեցիին կողմէ
ՊԱ.Տ. Յ. ՏԵՓՈՅԵԱՆ
ՊԱ.Տ. Ս. ԵԱԳՈՒՊԵԱՆ

Հայ Կարմիր Խաչի կողմէ
ՏԻԿ. Ա. ՇՈՒՇԱՆ
ԱՐՄԵՆ ՎԱՀԱՆ

ԾԱՆՈԹ. — I. Հայաստանի սովելոց օգնութիւնը պիտի ըլլայ
փոխան դրամի՝ ապրուստի հիմնական պիտոյքներ դրկելով՝
ալիք, հազուստ, դեղօրայք, օնառ, եւայն:

II. Փոխադրութիւնը եւ մատակարարութիւնը պիտի կա-
տարուի Near East Relief-ի միջոցաւ, խորհրդակցութեամբ Հա-
յաստանի կառավարութեան կամ այլ մարմնի մը, եւ ի հարկին
գործակցութեամբ մեր ներկայացուցիչներուն:

III. Ներկայ հանգանակութեան արդիւնքը գլխաւորաբար
պիտի յատկացուի Հանրապետութեան սահմաններուն մէջ ապրող
հայութեան:

Հայաստանի Սովելոց Օգնութեան Ամերիկահայ Կեդրոնական
Յանձնախումբիս բաղկացուցիչ կազմակերպութեանց Կեդր.
Մարմինները այս կոչով կը հրահանգեն իրենց հոգաբարձութիւն-
ները, մասնանիւղերը, ակումբները եւ կօմիտները, փուրով ի-
րարու քով գալ եւ կազմել տեղական Հանգանակիչ Յանձնախում-
բեր:

Տեղական Յանձնախումբերը պէտք է ամսիջապէս յարաբե-
րութեան մտնեն Կեդրոնական Յանձնախումբին հետ հետեւեալ
հասցեով.

ARMENIAN RELIEF COMMITTEE OF AMERICA

367 Boylston St., Room 505, Boston, Mass.

Բոլոր չեֆերը պէտք է գրել՝
THE NATIONAL SHAWMUT BANK OF BOSTON
անունով եւ դրկուելու է Կեդր. Յանձնախումբիս:





Հրատարակութիւն Հ. Ս. Օ. Կեդր. Յանձ.
367 Boylston St., Room 505, Boston, Mass.

1922



